ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/3

ք. Երևան « 16 » Դեկտեմբեր 2020թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Փի-Արտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կարեն Քոչարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հասարակության հետ կապերի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 9417600 (ինը միլիոն չորս հարյուր տասյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.15 կետով կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում, [illegible]

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1□1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Փի-Արտ» ՍՊԸ
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7	ՀՎՀՀ 00080887
ՖՆ աշխատակազմի գործառնական	ՀՀ, ք.Երևան, Ս.Վրացյան 71շ բն 7
վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
900011054013	Հ/Հ 2480100082870000
02647057	Տնօրեն՝ Կ. Քոչարյան
Էդգար Գեվորգյան	
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«16» 03 2020թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	79411170/501	Հասարակության հետ կապերի ծառայությունները պետք է նպաստեն հարկային և մաքսային ոլորտների ռազմավարական նախաձեռնությունների մասին հանրային իրազեկվածության մակարդակի և հարկերը վճարելու իրավագիտակցության բարձրացմանը, հանրություն–ՊԵԿ հաղորդակցության արդյունավետության բարձրացմանը, փոխվստահության մշակույթի ամրապնդմանը և կառույցի գործունեության նկատմամբ բարենպաստ հանրային ընկալման ձևավորմանը: Կատարողը պարտավոր է Պատվիրատուի հետ համաձայնեցմամբ կազմակերպել և կառավարել ստորև նշված գործընթացների ամբողջական իրականացումը՝ պահպանելով նախանշված նպատակներին համահունչ քայլերի իրագործման միասնականությունը, ինչը պետք է բխի ՊԵԿ ռազմավարական նախաձեռնությունների տրամաբանությունից: Հարկ վճարողներին և հանրության լայն շրջանակին նախապատրաստել ՊԵԿ ռազմավարական նախաձեռնությունների իրագործմանը՝ դրանց վերաբերյալ հասարակական դրական կարծիք ձևավորելու նպատակով: Այդ շրջանակում կազմակերպել և իրագործել ՊԵԿ նախաձեռնություններին համահունչ թեմաների շրջանառում թիրախային լսարաններում՝ կիրառելով լայն գործիքակազմ, այդ թվում քննարկում-	դրամ	9417600	1	Ք. Երևան, Մ. Խորենացի 3,7	Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 310 օրացուցային օրվա ընթացքում:

		բանավեճեր, հարցազրույցներ, սոցիալական մեդիային բնորոշ գործիքներ և այլն: ՊԵԿ ռազմավարական նախաձեռնությունների հանրայնացման արշավը պետք է ներառի հասարակության հետ կապերի մի շարք միջոցառումներ՝ տարբեր ձևաչափերով: Նշված միջոցառումները պետք է ընդգրկեն առցանց և տպագիր լրատվամիջոցներում հոդվածների, հարցազրույցների հրապարակում, ինչպես նաև քննարկում-բանավեճերի և հարցազրույցների հեռարձակում հեռուստատեսությամբ և ռադիոյով, ինֆոգրաֆիկաների, վերլուծական-տեղեկատվական արտադրանքի ու տեսահոլովակների պատրաստում և տարածում սոցիալական ցանցերում: Կատարողը պարտավոր է իրականացնել ԶԼՄ մոնիթորինգ՝ ամփոփելով ՊԵԿ նախաձեռնությունների վերաբերյալ հրապարակումները: (Հարցազրույցների, հոդվածների, քննարկում-բանավեճերի, ինֆոգրաֆիկաների, տեսահոլովակների հետ կապված և ԶԼՄ մոնիթորինգի կազմման մանրամասները ներկայացվում են ստորև): Ծառայությունների մատուցման ընթացքում կատարողը պետք է պատրաստի առնվազն 2 ինֆոգրաֆիկա, որոնք կներկայացնեն ՊԵԿ գործունեության արդյունքները, ցուցանիշները: Ինֆոգրաֆիկաները տարածել նաև սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով 3 օր՝ ըստ համապատասխան թիրախային լսարանների (թիրախային լսարանների ընտրությունը քննարկել պատվիրատուի հետ): Ինֆոգրաֆիկաները պատվիրատուին ներկայացնել էլեկտրոնային եղանակով: Ինֆոգրաֆիկաները սոցիալական ցանցերի գովազդային հարթակներում տարածելու վերաբերյալ ներկայացնել նաև էկրանից արված նկարը (screenshot), որտեղ կարտացոլվի սոցիալական ցանցի տեսակի, ընտրված թիրախային լսարանի, օրվա, ընտրված ժամանակահատվածի մասին տեղեկատվությունը: Կատարողը պետք է պատրաստի 2 տեսահոլովակ, որից մեկը՝ անիմացիոն, մեկը՝ խաղարկային: Տեսահոլովակների բովանդակությունը պետք է բխի ՊԵԿ ռազմավարական նախաձեռնություններից: Տեսահոլովակները պետք է հանրամատչելի ձևով հանրությանն իրազեկեն հարկային և մաքսային ոլորտներում իրականացվող բարեփոխումների, ընթացակարգային փոփոխությունների մասին: Տեսահոլովակներից յուրաքանչյուրի տևողությունը պետք					

		է լինի 50-60 վայրկյանի սահմաններում: Տեսահոլովակները պետք է ունենան Full HD որակ: Կատարողը պետք է ապահովի 2 տեսահոլովակներից յուրաքանչյուրի հեռարձակումը ՀՀ ողջ տարածքում սփռվող հեռուստաընկերություններից մեկով, շաբաթվա մեջ 5 անգամ՝ 5 աշխատանքային օրերին (ամեն օր մեկ անգամ)՝ ժամը 18:30-ից 23:30-ն ընկած ժամանակահատվածում: Իսկ հաջորդ շաբաթվա ընթացքում ապահովել կրկնությունը՝ ժամը 11:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում՝ ցուցադրելով օրական մեկ հոլովակ (յուրաքանչյուրը 5 անգամ): Տեսահոլովակները տարածել նաև սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ ըստ համապատասխան թիրախային լսարանների (թիրախային լսարանների ընտրությունը քննարկել պատվիրատուի հետ): Տեսահոլովակներն այս եղանակով շրջանառել առնվազն 1 շաբաթ՝ ամեն օր: Տեսահոլովակները սոցիալական ցանցերի գովազդային հարթակներում տարածելու վերաբերյալ ներկայացնել նաև էկրանից արված նկարը (screenshot), որտեղ կարտացոլվի սոցիալական ցանցի տեսակի, ընտրված թիրախային լսարանի, օրվա, ընտրված ժամանակահատվածի մասին տեղեկատվությունը: Կատարողը պարտավոր է ծառայությունների մատուցման շրջանակում կազմակերպել և պատրաստել 5 հարցազրույց, 3 քննարկում և 6 հոդված՝ ապահովելով հրապարակումը: Ապահովել 3 հոդվածի և 2 հարցազրույցի պատրաստումն ու հրապարակումը տպագիր մամուլում՝ Հայաստանի Հանրապետությունում լույս տեսնող և ողջ հանրապետությամբ տարածվող օրաթերթերում և շաբաթաթերթերում (առնվազն 3 տարբեր թերթեր), մնացած 3 հոդվածի և 3 հարցազրույցի հրապարակումն ապահովել լրատվական-վերլուծական և ըստ ոլորտների մասնագիտացված առաջատար կայքերում (առնվազն 4 տարբեր կայքեր): Կայքերում հրապարակման համար նախատեսված հարցազրույցներից 3-ը պետք է կազմակերպվեն և հրապարակվեն կայքերի՝ առցանց հեռարձակվող, հարցազրույցի ձևաչափով հաղորդումներով (նվազագույնը 10 րոպե տևողությամբ): Հարցազրույցներ տվողները կարող են լինել ինչպես ՊԵԿ համապատասխան պաշտոնյաներ, այնպես էլ					

		փորձագետներ, ոլորտային մասնագետներ, հասարակական կարծիք ձևավորող անհատներ, հայտնի գործիչներ և այլն (հարցազրույց տվողների ընտրությունը քննարկել պատվիրատուի հետ): 3 քննարկումներից մեկը պետք է կազմակերպվի և հրապարակվի լրատվական-վերլուծական և ըստ ոլորտների մասնագիտացված առաջատար կայքերի, երկրորդը՝ ՀՀ ողջ տարածքում սփռվող հեռուստաընկերությունների, և երրորդը՝ լրատվական-վերլուծական բնույթի հաղորդումներ ունեցող ռադիոընկերությունների՝ նվազագույնը 20 րոպե տևողությամբ, քննարկում-բանավեճի ձևաչափ ունեցող հաղորդումներով: Հարցազրույցները, հոդվածները, քննարկումները տարածել նաև սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ ըստ յուրաքանչյուր հրապարակման թիրախային լսարանների (թիրախային լսարանների ընտրությունը քննարկել պատվիրատուի հետ): Հոդվածներն այս եղանակով շրջանառել առնվազն 1 շաբաթ՝ ամեն օր, հարցազրույցները և քննարկումները՝ առնվազն մեկ օր: Հարցազրույցները, հոդվածները, քննարկումները սոցիալական ցանցերի գովազդային հարթակներում տարածելու վերաբերյալ ներկայացնել նաև էկրանից արված նկարը (screenshot), որտեղ կարտացոլվի սոցիալական ցանցի տեսակի, ընտրված թիրախային լսարանի, օրվա, ընտրված ժամանակահատվածի մասին տեղեկատվությունը: ԶԼՄ մոնիթորինգը պետք է ընդգրկի հեռուստաեթերը, ռադիոեթերը, տպագիր թերթերը և կայքերը: Մոնիթորինգի արդյունքները պատվիրատուին տրամադրել հաշվետվության տեսքով էլեկտրոնային և թղթային եղանակներով: Հասարակության հետ կապերի վերոնշյալ յուրաքանչյուր նախաձեռնության վերաբերյալ մոնիթորինգի արդյունքներն ամփոփել և պատվիրատուին ներկայացնել ամսվա կտրվածքով: Մոնիթորինգի արդյունքները ներկայացնել ՊԵԿ յուրաքանչյուր նախաձեռնությանն առնչվող իրազեկման արշավի համար առանձին-առանձին՝ խմբավորելով ըստ ԶԼՄ տեսակների: Առցանց հրապարակումների, ռադիո և հեռուստատեսային հեռարձակումների առցանց հասանելիության դեպքում ներկայացնել նաև հրապարակումների հղումները: Մոնիթորինգի արդյունքների մասին հաշվետվության մեջ ներառել նաև					

		բոլոր հրապարակումները. տպագիր թերթերի դեպքում՝ թերթի տվյալ համարը (կամ էջի պատճենը), կայքերի դեպքում՝ հրապարակումը պարունակող էջը՝ տպված տարբերակով և էկրանից արված նկարով (screenshot), որտեղ կարտացոլվի նաև հրապարակման հարթակի, օրվա, ժամի մասին տեղեկատվությունը, կայքերում տեսանյութի տեսքով հրապարակումների դեպքում՝ տեսանյութը և էկրանից արված նկարը (screenshot), որտեղ կարտացոլվի նաև հրապարակման հարթակի, օրվա, ժամի մասին տեղեկատվությունը, հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հեռարձակումների դեպքում՝ տեսաձայնագրությունները և (կամ) էկրանից արված նկարը (screenshot), որտեղ կարտացոլվի նաև հրապարակման հարթակի, օրվա, ժամի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև հեռուստաընկերություններից և ռադիոընկերություններից հեռարձակման մանրամասների վերաբերյալ տեղեկանքները: *Բոլոր հրապարակումների (հարցազրույց, հոդված, բանավեճ, ինֆոգրաֆիկա) թեման, ուղղվածությունը և այլ մանրամասներ համաձայնեցնել պատվիրատուի համապատասխան ստորաբաժանման հետ: * Յուրաքանչյուր տեսահոլովակի պատրաստումն սկսելուց առաջ պատվիրատուի հետ համատեղ որոշել ուղենիշերը, անհրաժեշտության դեպքում պատվիրատուն կատարողին կտրամադրի թեմայի վերաբերյալ տեղեկատվություն: *Տեսահոլովակների սցենարը համաձայնեցնել պատվիրատուի հետ: *Տեսահոլովակները պատրաստելու ընթացքում՝ նախքան հրապարակումը, պատվիրատուի պահանջով կատարողը պարտավոր է ուղղումներ մտցնել տեսահոլովակներում, մինչև վերջնական հաստատումը: *Պատվիրատուն էլեկտրոնային նամակագրությամբ համաձայնությունը տալիս է առավելագույնը 7 օրվա ընթացքում: * Հասարակության հետ կապերի վերոնշյալ բոլոր միջոցառումների յուրաքանչյուր քայլի նախապատարաստման և իրագործման ժամկետը, տեխնիկական և բովանդակային մանրամասները ծառայության մատուցման ընթացքում հստակեցնել պատվիրատուի հետ: * Կատարողը պարտավոր է պատվիրատուի կողմից					

		Էլեկտրոնային նամակագրությամբ ծառայության մատուցման պահանջը ներկայացնելուց հետո, ապահովել հարցազրույցների, հոդվածների և քննարկումների պատրաստումն ու հրապարակումը դրանց իրագործման պահանջը ծագելուց առնվազն 20-30 օրվա ընթացքում, ինֆոգրաֆիկաների դեպքում՝ 20 օրվա ընթացքում, տեսահոլովակների դեպքում՝ պատրաստման համար՝ 20-25 օրվա, իսկ հեռարձակման համար 20-30 օրվա ընթացքում՝ պատվիրատուի համաձայնությամբ: * Տեսահոլովակները պատվիրատուին հանձնել 10 CD և 1 USB կրիչով: •					

ույթի հրավերով սահմանել մինչև 25 % կանխավճար:
ռայությունների դիմաց վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայության դիմաց:
ման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
900011054013
02647057
Էդգար Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Փի-Արտ» ՍՊԸ
ՀՎՀՀ 00080887
ՀՀ, ք.Երևան, Ս.Վրացյան 71$_2$ բն 7
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480100082870000
Տնօրեն՝ Կ. Քոչարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 1՝1
«16» 03 2020թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/3 ծածկագրով պայմանագրի

Ծառայությունների միավոր արժեքի գին

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության տեսակ	Միավորի գին
1.	Անիմացիոն տեսահոլովակի պատրաստում	432 000
2.	Խաղարկային տեսահոլովակի պատրաստում	1 008 000
3.	Տեսահոլովակի շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով առնվազն 1 շաբաթ՝ ամեն օր	100 800
4.	Տեսահոլովակի հեռարձակում ՀՀ ողջ տարածքում սփռվող հեռուստաընկերություններից մեկով 5 անգամ՝ 5 աշխատանքային օրերին (ամեն օր մեկ անգամ)՝ ժամը 18:30-ից 23:30-ն ընկած ժամանակահատվածում: Կրկնությունը՝ հաջորդ շաբաթ՝ 5 անգամ, ժամը 11:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում (ամեն օր մեկ անգամ)	1 209 600
5.	Հարցազրույցի պատրաստում և հրապարակում տպագիր մամուլում (Հայաստանի Հանրապետությունում լույս տեսնող և ողջ հանրապետությամբ տարածվող օրաթերթ կամ շաբաթաթերթ)	172 800
6.	Հարցազրույցի կազմակերպում և հրապարակում լրատվական-վերլուծական կամ ըստ ոլորտի մասնագիտացված առաջատար կայքի՝ առցանց հեռարձակվող, հարցազրույցի ձևաչափով հաղորդմամբ (նվազագույնը 10 րոպե տևողությամբ)	288 000
7.	Հարցազրույցի պատրաստում և հրապարակում լրատվական-վերլուծական կամ ըստ ոլորտի մասնագիտացված առաջատար կայքում	0
8.	Հարցազրույցի շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ առնվազն մեկ օր	14400
9.	Հոդվածի պատրաստում և հրապարակում տպագիր մամուլում (Հայաստանի Հանրապետությունում լույս տեսնող և ողջ հանրապետությամբ տարածվող օրաթերթ կամ շաբաթաթերթ)	172 800
10.	Հոդվածի պատրաստում և հրապարակում լրատվական-վերլուծական կամ ըստ ոլորտի մասնագիտացված առաջատար կայքում	216 000
11.	Հոդվածի շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ առնվազն 1 շաբաթ՝ ամեն օր	28 800
12.	Քննարկման կազմակերպում և հրապարակում լրատվական-վերլուծական կամ ըստ ոլորտի մասնագիտացված առաջատար կայքի՝ նվազագույնը 20 րոպե տևողությամբ, քննարկում-բանավեճի ձևաչափ ունեցող հաղորդմամբ	432 000
13.	Քննարկման կազմակերպում և հրապարակում ՀՀ ողջ տարածքում սփռվող հեռուստաընկերություններից մեկի՝ նվազագույնը 20 րոպե տևողությամբ, քննարկում-բանավեճի ձևաչափ ունեցող հաղորդմամբ	1 209 600
14.	Քննարկման կազմակերպում և հրապարակում լրատվական-վերլուծական բնույթի հաղորդումներ ունեցող ռադիոընկերության՝ նվազագույնը 20 րոպե տևողությամբ, քննարկում-բանավեճի ձևաչափ ունեցող հաղորդմամբ	144 000
15.	Քննարկման շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ առնվազն մեկ օր	14400

16.	Ինֆոգրաֆիկայի պատրաստում	216 000
17.	Ինֆոգրաֆիկայի շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ 3 օր	57600
18.	ԶԼՄ մոնիթորինգի իրականացում (հեռուստաթեթեր, ռադիոթեթեր տպագիր թերթեր, կայքեր)	36000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
900011054013
02647057
Էդգար Գեվորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Փի-Արտ» ՍՊԸ
ՀՎՀՀ 00080887
ՀՀ, ք.Երևան, Ս.Վրացյան 71$_2$ բն 7
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480100082870000
Տնօրեն՝ Կ. Քոչարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
« 16 » 03 2020թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«16» 03 2020թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն